

ՏԻՖԵՐԱԿԱՆ

Սիրտ մը կարծես բաբախող,
 Փըրթած, ինկած երկընթէն...
 Սիրտ մը կապոյտ, քնարուող
 Երկնի անտես մատներէն...:

Սիրտն է այդ Սիրտն Աստըծուն,
 Որ ինկաւ վար դըրախտէն
 Այն պահուն իսկ երբ ծառէն
 Կերան պտուղն մեղքերուն...:

Սիրտ մը կապոյտ, անարին,
 Սիրտ մը հալած վիշտերէն,
 Նետուած սըրտին վիհերուն
 Մեղքի լեռներն իր բանտն են...:

Բագրատունի

ԴԻՄԱՆԿԱՐՍ

Ոմանք կարծում են, թէ կանգուն մեկն եմ,
 Ու չեն նկատում տկարությունս:
 Ոմանք կարծում են ահագին մեծն եմ
 Ու չեն էլ տեսնում խեղճ մանրությունս:
 Եվ թող գան, տեսնեն՝ փորձության ժամին,
 Թե ինչպես եմ ես մեկից խեղճանում,
 Ու սև փորձության փոթորկոտ քամին
 Մտքերս առնում և ո՞ր է տանում:
 Թշնամիս գիտե, թե ես որտեղի՞ց
 Կամ էլ՝ ինչո՞վ եմ իսկույն խեղճանում:
 Միայն Հիսուսն է այդ ահեղ ձորից
 Փրկարար ձեռքով ինձ վերև հանում:
 Դե, ինչ էլ լինի, մարդ եմ, հողածին
 Ու միշտ ենթակա՝ սայթաքելու ցած:
 Թող որ ինձ պահի Որդին Միածին,
 Ես վերքեր ունեմ դեռ չըսպիացած...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ